

7.

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ECONOMICS
ЭКОНОМИКА**

**ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԱՌԱՆՁՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(ԱՊՅ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ի. Ե. ԽԼՂԱԹՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու,
պրոֆեսոր*

Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր*

Ժամանակակից միջազգային հարաբերություններում տնտեսական կյանքի ինտեգրումը և շուկաների բացությունը այնպիսի աստիճան է ձեռք բերել, որ աշխարհի և ոչ մի երկիր, այդ թվում և Հայաստանը, չի կարող ապահովել կայուն տնտեսական աճ, եթե այն դուրս մնա ինտեգրացման տնտեսական հարաբերություններից: Ընդ որում, շուկայական տնտեսությունների փորձը վկայում է, որ միջազգային տնտեսական ինտեգրացիան ոչ միայն այդ երկրների զարգացման հետևանք է, այլ նաև դրանց զարգացման կայուն երաշխիք է: Միջազգային ինտեգրումը կարող է դառնալ ցանկացած երկրի տնտեսության տեխնիկական ու տեխնոլոգիական կատարելագործման և ընդհանուր զարգացման գործուն, իրական լծակ:

Առանձին վերցրած երկրում, ինչպես և ինտեգրացիոն համագործակցության շրջանակներում, կարելի է հասնել հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման այն դեպքում, եթե համագործակցության անդամ երկրների կառավարությունները համատեղ ջանքեր գործադրեն արտատնտեսական գործունեության ազատականացման, ապրանքների ու ծառայությունների, արտադրության գործոնների միջազգային շարժի արգելքների վերացման ուղղությամբ: Դրա համար անհրաժեշտ կլինի ստեղծել համապատասխան լիազորություններով օժտված վերազգային միասնական կառավարման ինստիտուտներ¹:

Ինտեգրացիոն պրոցեսների պատմությունը վկայում է, որ դրանց սկզբնական դրսևորումներում կարևոր նախադրյալներ էին երկրների ներքին առավելու-

¹ **Н. Шумский**, Содружество Независимых Государств: первые двадцать лет, Вопросы экономики, N 12, 2011, стр. 97.

թյունների առկայությունը, իսկ ինտեգրման ժամանակակից գործընթացներում առավել չափով մեծացել են արտաքին պայմանների դերն ու նշանակությունը, հատկապես տնտեսական և քաղաքական գլոբալացման առանձնահատկությունները: Դա կարելի է համարել ճշմարիտ հատկապես զարգացող երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանը:

Հայտնի է, թե որքան ցավալի հետևանքներ ունեցավ ԽՍՀՄ-ի կազմալուծումը ինքնուրույնություն ստացած երկրներում՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Կարելի է նշել, օրինակ, բոլոր հանրապետություններում արդյունաբերական արտադրության 50-60%-ից ավել կրճատվեցին², որի գլխավոր պատճառը նախկին տնտեսական կապերի խզումն էր, ինչը առաջացել էր նոր պետական սահմանների ստեղծման, ապրանքների ու մարդկանց տեղաշարժերի զանազան արգելքների առաջացման, ազգամիջյան հակամարտությունների և այլնի հետևանքով³:

Հաշվի առնելով այդ հանգամանքները, արդեն անկախ երկրների համար, հրամայական հարց էր դարձել՝ ստեղծել տնտեսական և քաղաքական նոր հարաբերությունները կարգավորող ինստիտուտ՝ Անկախ երկրների Համագործակցություն (ԱՊՀ): Հետխորհրդային տարածաշրջանը, իրավիճակային և հեռանկարային իմաստով, ուներ էական առանձնահատկություններ, որոնք պայմանավորված էին ոչ միայն այդ երկրների ու ժողովուրդների պատմական ու տնտեսական ընդհանրություններով, այլև նոր ձևավորվող միջպետական հարաբերություններով: ԱՊՀ անդամ երկրները պետք է մշակեին առևտրատնտեսական համագործակցության լրիվ նոր ռազմավարություն, հնարավորին չափով վերականգնեին խզված կապերը և ստեղծեին փոխգործողության սկզբունքորեն նոր մեխանիզմներ:

Հետխորհրդային տարածաշրջանում, որպես երկրների ինտեգրման առաջին միավորում, ԱՊՀ-ի շրջանակներում սկսվեցին որակապես նոր միջպետական հարաբերությունների ձևավորման և փոխշահավետ իրավահավասարության հիման վրա համագործակցության կարգավորման գործընթացներ:

Անցած քսան տարիների ընթացքում ԱՊՀ երկրներում կուտակվեցին և շարունակում են առաջանալ դժգոհություններ և հակասություններ այդ միավորման գործունեությունից, քանզի անցած ժամանակահատվածում տնտեսական համագործակցության ոլորտում այնքան էլ լուրջ նվաճումներ չարձանագրվեցին⁴:

Ըստ էության, հենց սկզբից էլ նկատվում էր որոշակի խզում իրականության և չափազանցված սպասումների, հայտարարված նպատակների ու խնդիրների միջև: Հիմնադիր փաստաթղթում հստակ որոշակիացված չէին միավորման և առանձին հանրապետությունների իրավասությունները, ինչը հանգեցրեց նրան, որ ԱՊՀ-ն ընկալվեց ոչ թե որպես միասնական քաղաքական և տնտեսական գործողությունների կատարման համակարգ, այլ որպես կամավոր համագործակցության մարմին, որտեղ չկա ընդունված որոշումների կատարման պատասխա-

² Российский Статистический справочник М., 1997, с. 694.

³ В. Зуев, Национальный механизм в теории интеграции, МЭ и МО, N 4, 2011, стр. 75.

⁴ Н. Шумский, Содружество Независимых Государств: первые двадцать лет, Вопросы экономики, N 12, 2011, стр. 101.

նատվության ինստիտուտը:

Ինտեգրացիոն գործընթացների համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ցանկացած միավորման կայացման և զարգացման գործընթացները ուղեկցվում են հիմնախնդիրների ու հակասությունների առատությամբ: Եթե դրանք սկզբնական շրջանում ունեին օբյեկտիվ բնույթ և պայմանավորված էին հիմնականում բարեփոխումներով, նոր շուկայական տնտեսակարգի ձևավորմամբ, ապա XXI դարի առաջին տասնամյակում ԱՊՀ երկրները սկսեցին փնտրել համագործակցության նոր գործընկերներ զարգացած երկրների շրջանակներից:

Նկատի ունենալով Հայաստանի և ԱՊՀ մյուս անդամ երկրների քաղաքական և տնտեսական զարգացումները, կարելի է ԱՊՀ-ի շրջանակներում ինտեգրման հիմնախնդիրները խմբավորել հետևյալ կերպ.

1. արտաքին հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են ինչպես ԱՊՀ-ին՝ որպես ինտեգրման միավոր, այնպես էլ առանձին վերցրած անդամ երկրներին,

2. ԱՊՀ-ի շրջանակում գոյություն ունեցող հիմնախնդիրներ,

3. ներերկրային կամ անդամ երկրների ներսում առաջացող հիմնախնդիրներ: Առաջին խումբը հիմնախնդիրներից կարելի է առանձնացնել՝

ա) ԱՊՀ անդամ երկրների ձգտումը որքան կարելի է արագ ինտեգրվել միջազգային տնտեսական միավորներին.

բ) առաջավոր տեխնոլոգիաների, օտարերկրյա ուղղակի ներդրումների անհրաժեշտությունը,

գ) արտաքին շուկաներում մրցակցության սրությունը,

դ) որոշակի խնդիրներ, որ գոյություն ունեն կապված միջազգային ահաբեկչության, կոռուպցիայի, թմամոլության, ստվերային տնտեսության և այլ ոլորտների հետ:

Երկրորդ խումբը հիմնախնդիրները ԱՊՀ-ի գործունեության օրենսդրական-իրավական դաշտի անկատարության արդյունք են, որոնք արտահայտվում են ընդհանուր որոշումների չկատարման դրսևորումներում, անդամ երկրների միջև գոյություն ունեցող զանազան բնույթի հակասությունների ձևով, ինքնուրույնությանը կամ անկախությանը սպառնացող հնարավոր ղեպքերի և ազգամիջյան ընդհարումների ձևով: Որոշակի հիմնախնդիրներ են առաջանում նաև անդամ-երկրների տնտեսական զարգացման տարբեր մակարդակների պատճառով, վճարահաշվարկային հարաբերությունների անարդյունավետության հետևանքով, որի ժամանակ գոյանում են մեծ պարտքեր և այլն:

Երրորդ խմբի հիմնախնդիրներից կարելի է առանձնացնել անդամ երկրների ամբողջ տնտեսական համալիրի խորը և արմատական կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը, օտարերկրյա ֆիրմաների տնտեսական գործունեությունից ստացված եկամուտների մի մասը երկրի ներսում օգտագործելու արդյունավետ մեխանիզմների բացակայությունը, տնտեսության ճյուղերի կառուցվածքային համամասնությունը, ժողովրդագրական և բնապահպանական իրավիճակները և այլն:

Այս թվարկումը խոսում է այն մասին, որ ԱՊՀ-ն որպես ինտեգրացիոն միություն և քաղաքական կառույց, տեսականորեն թույլ է տալիս մերձեցնել և համաձայնեցնել անդամ երկրների շահերը, բայց դեռևս հեռու է տնտեսական համագործակցության արդյունավետ կառույց լինելուց: Այդ թերությունները մասամբ

վերացնելու նպատակով 2011թ. հունիսին Իրկուտսկ քաղաքում կայացած ԱՊՀ 53-րդ նիստի ժամանակ ընդունվել են որոշումներ՝ ստեղծելու ռեալ իրավասություններով վերաբեռնված ինստիտուտներ, որոնց արդյունավետ աշխատանքներից մեծ չափով կախված կլինի ԱՊՀ հետագա ճակատագիրը և անդամ երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Н. Исиягария**, 10 лет СНГ: проблемы, поиски, решения, М., 2001.
2. **В. Зуев**, Национальный механизм в теории интеграции, МЭ и МО, N 4, 2011.
3. **Н. Шумский**, Региональные экономические объединения государств Содружества, МЭ и МО, N 3, 2012.
4. **Н. Шумский**, Содружество Независимых Государств: первые двадцать лет, Вопросы экономики, N 12, 2011.

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ И ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ (НА ПРИМЕРЕ СНГ)

**И. Е. ХЛГАТЯН
С. Г. АМИРХАНЫАН**

Интеграция экономической жизни и открытость рынков в современных международных условиях приобрела такую степень, что ни одна страна мира, в том числе и Армения, не сможет обеспечить стабильный экономический рост, если не войдет в интеграционные экономические отношения. Интеграция считается стабильным гарантом развития стран. Поэтому страны СНГ должны благодаря торгово - экономическому сотрудничеству разработать новую стратегию, по возможности восстановить утраченные связи и создать принципиально новые механизмы взаимодействия.

Учитывая политическое и экономическое развитие Армении и других членов СНГ, можно сгруппировать проблемы интеграции, сгруппировать их и согласовать с интересами стран и найти эффективные решения.

THE INSTITUTIONAL ISSUES AND PECULIARITIES OF INTEGRATION (AFTER THE EXAMPLE OF THE CIS)

**I. E. KHLGHATYAN
S. G. AMIRKHANYAN**

The integration of the economic life and the openness of markets in modern international relations are on such a level that there is no other country in the world such as Armenia which can secure stable economic growth if it stays out from the economic relations of integration. It is considered to be a stable guarantee of the development of countries. So, the CIS countries have to create a new strategy in virtue of the trade and economic cooperation, restore severed connections as far as possible and create new mechanisms of reaction.

Taking into account the political and economic developments of Armenia and CIS countries, the issues of integration can be grouped and coordinated with the benefits of countries and effective solutions can be found.